

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

28.05.2021



Սիրելի՛ սյունեցիներ

1918թ. մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը հայտարարեց Հայաստանի անկախ հանրապետություն ստեղծելու մասին, եւ այսօր մեր ազգային տոնացույցում նշվում է Հանրապետության տոնը, որի առիթով շնորհավորում եմ բոլորիս:

Այսօր, առավել քան երբեւէ, մեզ համար պետք է միասնության, ազգային համախմբման դաս եւ ուսանելի օրինակ, նաեւ ճիշտ ճանապարհի ընտրելու ուղեւիշ լինեն 1918-ի մայիսյան հերոսամարտերը, որոնց շնորհիվ կարողացանք հայրենիք պահել ու դարերով երազած ինքնիշխան պետականությունը վերականգնել:

Այդ ճակատամարտերում նաեւ սյունեցի պանծալի հերոսներ ենք ունեցել, մենք նրանց արժանի հետնորդները պետք է լինենք ու մեր զավակներին ու թոռներին առավել ուժեղ դիրքերում գտնվող երկիր ժառանգենք: Այդ հերոսների պայքարով ու հայրենասիրությամբ ոգեշնչվել ենք 20-րդ դարավերջի ու հետագա գոյապայքարներում, նրանք մեզ համար հայրենիքը փրկելու համար ոգեշնչման աղբյուր պիտի լինեն նաեւ այսօր, քանզի պատմությունը, ցավոք, կրկնվելու հատկություն ունի...

Անկախությունն ամենաթանկ արժեքն է յուրաքանչյուր պետության համար, ամուր պահենք ու փայփայենք այն՝ անելով ամեն ինչ այն չսասանելու ու առավել ամրացնելու համար: Միասնությունն ու Հայաստան երկրին անդավաճան, անձնականը ստորադասելով նվիրումն է այն ճանապարհը, որը մեզ կտանի այդ հանգրվան: Ուրեմն՝ խոհեմություն, սթափ կողմնորոշվելու ունակություն, ապագային լավատեսությամբ նայելու կամք՝ բոլորիս:

Շնորհավոր՝ Հանրապետության տոն, խաղաղություն՝ մեր երկրին: